

ՎԱՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ
Արդի

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՍՈՒԹՅԱՆ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՍԿԶԲՈՒՆՔԸ ԵՎ ՂԱՐԱԲԱԴՅԱՆ ԴԻՄԱԿԱՐՑԻ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՇԱԿԱՐՄԵՐԸ**

Միջազգային իրավունքի սկզբունքները բոլոր սուբյեկտների համար ունեն պարտադիր բնույթ: Այդ սկզբունքները փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրը պետք է դիտել մյուս բոլոր սկզբունքների համատեքստում:

Պետության տարածքային ամբողջականության սկզբունքը հաստատվել է 1945 թ. ՄԱԿ-ի կանոնադրության ընդունմամբ: Դրա իմաստը ցանկացած ուժնձգություններից պետության տարածքի պաշտպանությունն է:

1970 թ. ՄԱԿ-ի կանոնադրության մեջ մասնավորապես սահմանվեց, որ յուրաքանչյուր պետություն «պետք է ձեռնպահ մնա որևէ պետության կամ երկրի ազգային միասնության, տարածքային ամբողջականության խախտմանն ուղղված ցանկացած գործողություններից»: Նշվել է նաև, որ «պետության տարածքը չպետք է լինի ռազմական բռնազավթման օբյեկտ, որը հանդիսանում է ուժի գործադրումով կանոնադրության դրույթների խախտման արդյունք»: Ցավոք սրտի, դեռևս մինչև այս կանոնադրության ընդունումը, 20-րդ դարի սկզբներին խախտվեց արցախահայ պետության տարածքային ամբողջության սկզբունքը և այսօր էլ հաջողությամբ փորձ է արվում նույն սկզբունքի կիրարկմամբ նորից ոտնահարել մեր իրավունքները: Խոսենք փաստերով:

1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո ժամանակավոր կառավարությունը տեղերում ստեղծեց իշխանության մարմիններ՝ գործադիր կոմիտեներ:

Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (Օգակում) 1917 թ. մարտի 13-ի որոշմամբ ստեղծվեց Ղարաբաղի գործկոմ, որի իշխանությունը

տարածվում էր Արցախի ինչպես դաշտային, այնպես էլ լեռնային շրջանների վրա:

Ինչպես կենտրոնում, այնպես էլ ծայրամասերում ժամանակավոր կառավարության մարմիններին գուգահեռ ստեղծվեցին բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդներ: Զինվորների, բանվորների, գյուղացիների Շուշիի խորհրդի կազմի մեջ կային տարբեր ազգերի և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ:

1917 թ. հոկտեմբերյան պետական հեղաշրջումից հետո Անդրկովկասում նոյեմբերի 15-ին կազմավորվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկայան կոմիսարիատ: Անդրկովկասի քաղաքական ուժերը, չընդունելով Ոտսաստանում ստեղծված քաղաքական նոր կացությունը, երկրամասը հռչակեցին անկախ վարչաքաղաքական միավոր:

Տեղերում գգալի էր անիշխանության մթնոլորտը: Նախկին իշխանության մարմինները կազմալուծվեցին: Երկրամասում վխտում էին հանցագործ տարրերից կազմված բանդաները, որոնք անարգել թալանում էին խաղաղ բնակչությանը: Վերացվեցին հարևան շրջանների հետ ունեցած նախկին ավանդական կապերը: Մանավանդ դադարեցվեց դաշտային Ղարաբաղից Շուշի և հայկական մյուս բնակավայրերը ներկրվող ցորենի մատակարարությունը: Շուշիում մտցվեց հացի բախչնան քարտային եղանակը:

Դեղափոխությունից անմիջապես հետո Շուշուց հեռացավ քաղաքի հայկական մասում տեղակայված ռուսական 532-րդ հետևակային Սիբիրյան զորամասը: Նրան էր միացել ռուս-պարսկական սահմանում գտնվող 6-րդ սահմանապահ գնդի մի զորամաս ևս¹: 1917 թ. դեկտեմբերին ճակատից վերադառն ղարաբաղցի հայ զինվորներին Եվլախ-Շուշի խճուղու վրա բուրք-թաթարական բանդաները զինաթափեցին և գնդակահարեցին²:

Արցախի բնակչության մտահոգությունը վարատելու, երկրամասում կարգ ու կանոն հաստատելու լեգիտիմ իշխանություն ստեղծելու նպատակով Դայ հեղափոխական դաշնակցության Ղարաբաղի «Ապա-

¹ Դ. Թումյան, Ղեպեր Լեռնային Ղարաբաղում (1917-20 թթ.), պատմական ակնարկ, Եր., 1966, էջ 9:

² Նույն տեղում, էջ 4:

ռաժ» կոմիտեն նպատակահարմար գտավ գործող բոլոր քաղաքական ուժերի ջանքերի համադրմամբ կյանքի կոչել լիազոր մի մարմնի, «որ գործելու է իրեւ Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր տեղական իշխանություն և որի հիմնական նպատակն էր՝ կազմակերպել ժողովրդին, վերջ տալ գլուխ բարձրացրած անիշխանությանը և բոլոր միջոցներով պահպանել խաղաղությունը և համերաշխությունը երկու հարեւան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների միջև»¹: «Քաղաքական լուրջ անհրաժեշտություն էր նույնպես, որ Ղարաբաղի հայության կառավարող օրգանն իր կազմով լիներ այնպիսին, որ կարողանար հավատ և վստահություն ներշնչել նաև հարեւան մուսուլմանությանը»²:

Փաստորեն Լեռնային Ղարաբաղուն ստեղծվելիք իշխանությունը ի վերուստ բացառեց որևէ էթնիկ միավորի ծառայելու նտայնությունը և փորձեց հանդես գալ որպես իր լիազորության շրջանակներում գտնվող տարածքների բոլոր ազգերի շահերի պաշտպան: Դրա մասին է վկայում նաև հետագա դեպքերի գարգացման ընթացքը:

Նախապատրաստական աշխատանքներից հետո, 1917 թ. դեկտեմբերին Շուշիում կայացած հայ քաղաքական ուժերի հավաքը ստեղծեց տեղական իշխանության մի մարմին, որն անվանվեց «Յայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների ժամանակավոր խորհրդ»³: Այդ մարմինը հետագայում անվանվեց Միջկուսակցական բյուրո: Այն օժտված էր օրենսդիր և գործադիր գործառնություններով: Որոշվեց նորաստեղծ կառավարության մեջ ներառել, համամասնական սկզբունքով, տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների: Փոխադարձ համաձայնությամբ իինգ պորտֆելներ տրվեց դաշնակցությանը, իսկ մնացած կուսակցությունները ներկայացրին երեքական անդամներ: Որպես կառավարության անդամներ ընտրվեցին Յայրապետ Մուսայեւսանը, Անուշավան Սիբայեւսանը, Եղիշե Իշխանյանը, Յարություն Թումյանը, Ասծատուր Ավետիսյանը, Աշոտ Մելիք-Յովսեփյանը, Լևոն Վարդապետյանը, Նիկոլայ Խախանյանը, Դոհիվսիմե Մելիք-Յովսեփյանը, Արա Սիբայեւսանը, Ալեքսանդր Մելքոնյանը, Ալեքսանդր Ծատուրյանը, Արմենակ Ղարագյուղյանը և Մելիքսեթ Եսայանը: Խորհրդի

¹ Յ. Թումյան, նույն տեղում, էջ 14:

² Նույն տեղում, էջ 13:

³ Նույն տեղում, էջ 15:

նախագահ ընտրվեց դաշնակցական Հայրապետ Մուսայելյանը, իսկ քարտուղար՝ դաշնակցական Նիկոլայ Խսախանյանը¹:

Համաշխարհային հեղափոխության մոտալուս հաղթանակից ոգևորված և ազգային պետականությունը չընդունող բոլշևիկյան կուսակցության երեք ներկայացուցիչներ մի քանի օրից հրաժարվեցին մասնակցել նորաստեղծ իշխանության մարմնի գործունեությանը: Փաստորեն Միջկուսակցական բյուրոյի մեջ էին դաշնակցականներ, մենշևիկներ և էսեռներ:

Վերոհիշյալ փաստերն ու դեպքերի զարգացման ընթացքը մեզ հիմք է տալիս ասելու, որ 1917 թ. դեկտեմբերին, մի քանի ամիս առաջ, դեռևս մինչև Անդրկովկասյան երեք ազգային հանրապետությունների ծնունդը, Լեռնային Ղարաբաղում դրվեցին պետական մի միավորի հիմքերը, որոնք իրենց ավարտին հասան 1918 թ. հունիսին:

Գործուն իշխանություն ունենալու նպատակով Միջկուսակցական Բյուրոն նպատակահարմար գտավ ընտրական համակարգի միջոցով տեղերում ստեղծել վարչական և դատական մարմիններ:

Առանձնակի ուշադրության կենտրոնում էր պարենի հայթայթման գործը: Երկրի հայ բնակչության անվտանգությունը ապահովելու նպատակով 1917թ. դեկտեմբերին ստեղծվեց Ռազմական Խորհուրդ Հարություն Թումյանի գլխավորությամբ: Զինված ուժերի համալրումը իրականացվում էր կամավորության սկզբունքով: Զենքը և զինամթերքը ծեռք էր բերվում հիմնականում դրսից: Տեղերում ստեղծվում են զինագործական արհեստանոցներ: Քայլեր կատարվեցին երկրամաս հրավիրելու ժագումով արցախսից ռուսական բանակի սպաներին:

1918 թ. հունվարին Թիֆլիսում Հայրապետ Մուսայելյանը, բանակցելով Արցախ-Զանգեզուր հայրենակցական միության անդամների հետ, կազմակերպում է Արցախյան գումար, որի կազմում էր 600 զինվոր: Գնդի հրամանատար է նշանակվում գնդապետ Միքայել Սելիբ-Շահնազարյանը, իսկ տեղակալ՝ պորուչիկ Շովակ Ստեփանյանը²:

Միաժամանակ խնդիր դրվեց տեղերում վերջ տալ անիշխանությանը, հակահարված տալ ավագակային այն խնբավորումներին,

¹ Յ. Թումյան, Դեպքեր Լեռնային Ղարաբաղում (1917-20 թթ.), պատմական ակնարկ, Եր., 1966, էջ 15:

² «Հայրենիք», 1935, № 2, էջ 84:

որոնք պատուիաս էին դարձել խաղաղ աշխատավոր բնակչության համար: Հյուսիսային Արցախի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու, զենք և զինամթերք հայրեայթելու նպատակով 1918 թ. հունվարին Միջկուսակցական բյուրոյի որոշմամբ զինված մի ջոկատի գլուխ անցած՝ Գանձակ է մեկնում Հարություն Թումյանը:

1918 թ. ապրիլի 9(22)-ին Անդրկովկասյան սեյմը երկրամասը հռչակեց խորհրդային Ռուսաստանից անկախ վարչաքաղաքական միավոր: Անդրկովկասի երեք ժողովուրդների՝ հայերի, Վրացիների, ազերիթուրքերի ներկայացուցիչները ստեղծում են Անդրկովկասի ժողովրդական դաշնային հանրապետություն: Անդրկովկասյան սեյմում գտնվող հայ և մահմեդական ներկայացուցիչների համաձայնությամբ Լեռնային Ղարաբաղին տրվում է ազատ շրջանի կարգավիճակ¹:

Նայ քաղաքական ուժերը թուն քաղաքում ազգամիջյան լարվածությունը կանխելու և մահմեդական բնակչության հետ համագործակցության ելքեր գտնելու նպատակով մահմեդական կոմիտեին առաջարկեցին ստեղծել մի նոր մարմին՝ ազգամիջյան կոմիտե, որի մեջ ներառված կլինեն հայեր և մահմեդականներ: Կառավարման համակարգի անաշառությունը պահպանելու նպատակով որոշվեց Վրացի Յոսիֆ Իլավիանովիչ Կորիկին նշանակել կոմիտեի նախագահ: Նայ գործիչների հանդուրժողական, ավելի ծիշտ գիծողական, այս քայլը այդպես էլ չգնահատվեց ազերի-թուրքերի կողմից: Իրարաներժ շահերի գոյության պայմաններում ազգամիջյան կոմիտեն կարծատև գործունեությունից հետո 1918 թ. ապրիլի վերջին դադարեցրեց իր գործունեությունը²:

Իրավիճակը Արցախում ծանրացավ: Արցախի դաշտային հատվածում գործող թուրք գործավարները, մահմեդական հետամնաց խավերի վրա հենվելով, շրջափակեցին երկրամասը: Շուտով կյանքն ապացուցեց, որ Անդրկովկասի միացյալ կառավարությունը երկարատև գործել չէր կարող:

1918 թ. մայիսի 26-ին ստեղծվեց Վրաստանի հանրապետությունը, մայիսի 27-ին Աղրբեջանի հանրապետությունը, մեկ օր անց, մայիսի 28-ին՝ Հայաստանի հանրապետությունը: Հարկ է նշել, որ Աղրբեջանի հանրապետության կառավարությունը լիարժեք սկսեց գործել 1918 թ.

¹ «Մշակ», 25 հուլիսի, 1918, № 144:

² ՀՀ ՊԿՄ, ֆ. 221, գ.1, գ. 30, թ. 23-24, 28-29:

սեպտեմբերից, երբ թուրքերը օգնությանք նրանք գրավեցին Բաքուն և վերջ տվեցին Կոմունային: Միաժամանակ նկատենք, որ Ազգերի լիգան դե յուրէ չի ճանաչել Ադրբեջանի հանրապետությունը, իաշվի առնելով այն հանգանանքը, որ այդ երկիրը չուներ կայուն կառավարման համակարգ և չի վերահսկում այն տարածքները, որոնցին հավակնում է¹:

Օրեցօր ծանրանում էր արցախահայության վիճակը: Մանավանդ Բաքումի պայմանագրից հետո, երբ ՀՀ-ը հրաժարվեց Արցախից, Ադրբեջանի ճնշումները ավելի սաստկացան: Արցախի քաղաքական ուժերը, իաշվի առնելով տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, ուժերի հարաբերակցությունը, ինչպես նաև ՀՀ-ից սպասվող անհուսալի օգնությունը, որոշեցին նախկինում ստեղծած պետական միավորը ավելի ամրապնդել ու հենվելով սեփական ներուժի վրա՝ հաղթահարել թուրքերի՝ ազերի-թուրքերի և նրանց հետ գործակցող անգլիացիների ճնշումները: Այդ նպատակով 1918 թ. հունիսի 17-ին Շուշիում հրավիրված միջկուսակցական երկրորդ հավաք-խորհրդակցությունում որոշվեց ստեղծել նոր մարմին «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների կոմիսարների խորհուրդ»²: Կոմիսարներ են ընտրվում.

1. Հայրապետ Մուսայելյան, դաշնակցական, կոմիսարների խորհրդի նախագահ,
2. Աշոտ Սելիք Շովսեփյան, մենշևիկ, արդարադատության կոմիսար,
3. Հարություն Թումյան, դաշնակցական, գինվորական կոմիսար,
4. Արսեն Բակունց, մենշևիկ, արտաքին գործերի կոմիսար,
5. Արամ Միքայելյան, սոցիալիստ - հեղափոխական, ֆինանսների կոմիսար,
6. Ասծատուր Ավետիսյան, դաշնակցական, պարենավորման կոմիսար,
7. Արտաշես Պետրոսյան, դաշնակցական, ներքին գործերի կոմիսար,

¹ League of Nation, "The Records of the First Assembly meetings of the Committees II", Geneva, 1920, pp. 173-174.

² Հայրենիք» 1933, № 11, էջ 85:

8. Ոուրեն Տեր-Գասպարյան, սոցիալիստ - հեղափոխական, կոմիսարների խորհրդի քարտուղար:

Կոմիսարների խորհրդին կից ստեղծվում է մի մարմին, որը պիտի գրադպեր երկրամասի ազգային փոքրամասնությունների հարցերով: Երկրամասը բաժանվում է երկու շրջանի: Առաջին շրջանի մեջ ներառված էր Խաչենը, Զիվանշիրը, Զրաբերդը և Գյուլիստանը, լիազոր՝ Եղիշե Իշխանյան, իսկ երկրորդի մեջ՝ Վարանդան և Դիզակը, լիազոր՝ Արա Հովհաննիսյան¹: Յարկ է նշել, որ Եղիշե Իշխանյանի օրագրի մեջ կառավարության կազմը և պաշտոնները մի քիչ տարբեր ձևով է ներկայացված:

1. Անուշավան Տեր-Միքայելյան՝ նախագահ,
2. Ոուրեն Տեր-Գասպարյան՝ քարտուղար,
3. Աշոտ Մելիք-Շովանիյան՝ փոխնախագահ, միաժամանակ արտաքին գործերի վարիչ,
4. Նայրապետ Մուսաելյան՝ պարենավորման հարցերի վարիչ,
5. Նարություն Թումյան՝ գինվորական հարցերի վարիչ,
6. Արամ Միքայելյան՝ ֆինանսների վարիչ,
7. Արսեն Բակունց՝ հաղորդակցության վարիչ,
8. Արտաշես Պետրոսյան՝ ներքին գործերի վարիչ,
9. Ասատուր Ստեփանյան՝ հաշվապահ²:

Փաստն այն է, որ Լեռնային Ղարաբաղում ստեղծվել էր կոալիցիոն կառավարություն, որը նպատակային քաղաքականություն սկսեց վարել երկրի տնտեսական, քաղաքական, սոցիալական հարցերի լուծման ուղղությամբ:

Տեղերում իշխանության մարմինները ուժեղացնելու նպատակով 1918 թ. հուլիսի կեսերին վարչական նոր բաժանումներ կատարվեցին: Երկրամասը բաժանվում է չորս գավառի: Առաջին գավառի մեջ ներառվեց ամբողջ Դիզակը: Գավառապետը՝ Արտեմ Լալայանն էր, օգնականը՝ Աշոտ Շադրունցը: Երկրորդ գավառը ընդգրկում է Վարանդայի մի մասը Դրնավից Ավետարանոց, ուղիղ գծով ձգվելով դեպի հարավ, գավառապետն էր՝ Խորայել Տեր-Խորայելյանը, օգնական՝ Գեորգի

¹ ՀՀ ՊԿՊՍ, ֆ. 221, գ. 1, գ. 30, թ. 26, տես նաև Յ. Արքահամյան, Արցախահայության պատագրական պայքարը 1917-23 թթ., Աստենախոսություն, Եր., 1966, էջ 58-59:

² Եղիշե Իշխանյան, էջ 155:

Գասպարյանը, որը հետագայում դարձավ գավառապետ: Վարանդայի մյուս մասը Խաչենի աջափնյակի հետ ներառված էր Երրորդ գավառի մեջ: Գավառապետն էր Ալեքս Փիրումյանը, որին փոխարինեց Բագրատ Միքայելյանը: Չորրորդ գավառի՝ ծախափնյա Խաչենը, Զրաբերդը և Գյուլիստանը, գավառապետն էր Մարկոս Տեր Աստուածատրյանը, օգնականը՝ Արշակ Շահիջանյանը, որը նույնպես հետագայում դարձավ գավառապետ¹: Նման բաժանումը ավելի նպատակահարմար էր, որովհետև այս պարագայում նշված վարչական միավորները առավել շատ համապատասխանում էին Խամսայի սահմաններին: Պատմական փորձը այստեղ իր դերակատարությունը ունեցավ: Գավառներում կարգ ու կանոն հաստատելու համար ստեղծվեցին 50-ական հոգուց բաղկացած միլիցիայի ջոկատներ: Դիզակի միլիցիայի ջոկատի պետն էր Արսեն Լալայանը, օգնականներ՝ Աշոտ Շահունցը և Ավանես Զետեանցը: Վարանդայի միլիցիայի պետն էր Աղալար Դայրապետյանը, օգնականը՝ Աղապարոն Ղանիելքելյանը: Աջափնյա Խաչենինը՝ Աղասի Վերոյանը, օգնականը Ղալի Մահրասան: Խաչենի ծախափնյակի՝ Դաթերքի Ենթաշրջանինը՝ Ասծատուրը, Առաջաձորի Ենթաշրջանինը՝ Արտեմ Սուլթանյանը: Զրաբերդի միլիցիայի պետն էր՝ Նիկ. Դամբարձումյանը, օգնականը Նիկ. Զախարբեկյանը²:

«Քանի որ յեղափոխութեան հետևանքով քայլայել, վերջացել էին պետական հաստատութիւնները, - գրում է Ժամանակակիցը, - նորերն էլ չեն ստեղծել և հնարաւոր չեն ստեղծել, ուստի Բիւրոյի լիազօրները ստիպւած գրադարձ էին գյուղացիների միջև ծագած վէճերով քննիչի, հաշտարար միջնորդի և դատաւորի դեր կատարելով»³: Կոմիսարների խորհրդի լիազօրության տակ էր գտնվում նաև Արաքսի վրայով Պարսկաստանի սահմանը:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ կոմիսարների խորհուրդը ոչ միայն տնօրինում էր բուն Արցախի հայության ճակատագիրը, այս փորձում էր սատարել Ադրբեջանի հայությանը: 1918 թ. հուլիսի 8-ին Ղարաբաղի կոմիսարների խորհուրդը Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ստեփան Շահումյանին հղում է հետևյալ բովան-

¹ Եղիշե Իշխանյան, էջ 162-163:

² Նույն տեղում, էջ 163:

³ Նույն տեղում, էջ, 156:

դակությանք մի նամակ. «Թանկագին ընկեր Ստեփան Շահումյան, հայկական Ղարաբաղը պատրաստ է օգնելու ձեր կռվող ուժերին թիկունքային շեշտակի գործողություններով: Թշնամու դեմ կարող ենք հանել մինչև 20 հազար լավ սպառագինված և ամեն ինչով ապահովված փորձված մարտիկներ: Մեզ ներկայումս անհրաժեշտ են տվյալներ թշնամու ուժերի քանակի և դասավորության մասին: Դարվածի ուղղության և ժամանակի մասին տեղեկացրեք»: Նամակի տակ դրված է զինվորական կոմիսար Ջարություն Թումյանի ստորագրությունը¹: Նույն բովանդակության մեկ այլ նամակ էլ հասցեագրվել էր դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեին:

Կոմիսարների խորհրդի գործունեությունը իրավական իիմքերի վրա դնելու, ինչպես նաև երկրի ներքին և արտաքին քաղաքականությանը առնչվող հարցերը լուծելու նպատակով որոշվեց իրավիրել Ղարաբաղի հայության առաջին համագումարը: Մինչ այդ բոլոր գավառներում ընտրվեցին պատգամավորներ: Դա նոյնպես կատարվեց օրենքի շրջանակներում: Ըստ ընտրական իրահանգի յուրաքանչյուր գյուղում գյուղացիների ընդհանուր ժողովներում ընտրում էին երկուական պատգամավոր: Շուշի քաղաքը բաժանվել էր ութ ընտրական տեղամասի²:

1918 թ. հուլիսի 22-26-ը 180 պատգամավորների մասնակցությամբ Շուշիում իրավիրվեց համագումար: Ջամագումարը միաձայն որոշում է Ղարաբաղը ճանաչել որպես Արարատյան հանրապետության (այսինքն ՀՀ-ի - Վ. Բ.) մաս: Ջաշվի առնելով այն հանգամանքը, որ ստեղծված իրավիճակում Ղարաբաղը կտրված է ՀՀ-ից, որոշվեց ստեղծել Ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած ժողովրդական կառավարություն, որը պիտի ունենար երկիրը կառավարելու բոլոր իրավունքները: Կառավարությունը ուներ հետևյալ կազմը.

1. Այվազյան Մարտիրոս, հաղորդակցության և ճանապարհների վարիչ,
2. Բաղդասարյան Արսեն (նա ուներ նաև Շովանիյան ազգանունը - Վ. Բ.), պարենավորնան գործերի վարիչ,
3. Եսայան Մելիքսեթ, քարտուղար և շրջանների հետ կապի վարիչ,

¹ Ջարություն Թումյան, էջ 63:

² Նույն տեղում, էջ 71:

- Թումյան Հարություն, զինվորական գործերի վարիչ,
- Իշխանյան Եղիշե, ներքին և արտաքին գործերի վարիչ,
- Տեր-Աստվածատրյան Մարկոսբեկ, արդարադատության գործերի վարիչ,
- Քանայք Արշավիր, ֆինանսների վարիչ¹: Ղարաբաղի զինված ուժերի հրամանատար է նշանակվում Արտաշես Վարդապետյանը:

Դարկ է նշել, որ կառավարության անդամների պարտականությունների բախչվածությունը այլ ձևով է ներկայացված Հ. Արրահամյանի դոկտորական ատենախոսության մեջ²:

Եղիշե Իշխանյանի օրագորում տեղ գտածը ավելի հավանական է, որովհետև հեղինակը ոչ միայն կառավարության անդամ էր, այլ նաև վարչապետի լիազորություններ էր իրագործում:

Երկրի ներսում կարգ ու կանոնը պաշտպանելու նպատակով՝ քաղաքացիական բնույթի գործերը քննելու համար որոշվում է ստեղծել միջնորդ դատարաններ, իսկ քրեական հանցագործությունների համար՝ զինվորական դատարան: Կանոնակարգվում է հարկահանության գործը:

Դրաից ոչ մի օգնության հույս չունենալով, որոշվում է պարենի հարցը լուծել ներքին պահուստների հաշվին: Երկրի սահմանները անխաթար պահելու համար նպատակահարմար գտնվեց ստեղծել բանկային ստորաբաժանմներ:

Արտաքին քաղաքականության մարզում, մանավանդ թուրքերի հետ հարաբերությունների հարցում, փորձել պահպանել խաղաղ գոյակցության սկզբունքը³: Համագումարի որոշմամբ ստեղծվում է կառավարության օրգան՝ «Ղարաբաղի սուլիհանդակ» թերթը⁴: Գավառներում գործում էն կառավարության լիազորմերը, որոնց անվանում էին կոմիսարներ:

Բերված փաստերը վկայում էն, որ 1918 թ. հուլիսի 22-ին դեպքերի զարգացման արդյունքում Անդրկովկասում և Լեռնային Արցախում ստեղծվում է չորրորդ սուվերեն հանրապետությունը: Այն ուներ պետությանը հատուկ բռլոր ինստիտուտները. օրենսդիր մարմին, գործադիր դատական իշխանություն, բանակ, մայրաքաղաք:

¹ Եղիշե Իշխանյան, էջ 177:

² Հ. Արրահամյան, էջ 61:

³ Ե. Իշխանյան, էջ 173-174:

⁴ Հ. Արրահամյան, էջ 62:

Այդ ամենի մասին է վկայում նաև ՀՀ գործիչներից մեկը՝ բժիշկ Արշալույս Բաբայանը. «Ազգային խորհուրդը՝ կազմուած բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներից, կարողացաւ երկար ժամանակ Ղարաբաղը անկախ վիճակի մէջ պահել... Տաճիկների օրով և յետոյ նա առանց միջոցների, առանց դուրսի օգնութեան, մեն-մենակ, կարողացաւ իր Վարած ազգային և հաստատուն քաղաքականութեամբ հեռու պահել հայութիւնը կոտորածներից ու աւերից: ... Ազգային խորհուրդը թոյլ չտուալ ոչ տաճիկներին եւ Ադրբէջանին՝ տիրանալու Լեռնային Ղարաբաղին»¹:

Այդ օրերին «Մշակը» գրել է. «արցախահայությունը հռչակեց իր «անկախության իրավունքը»²: Նորաստեղծ պետության սահմանները սկսում է Գանձակի մատուցներից և հասնում մինչև Արաքսի ափերը: Ըստ Էության Արցախի իշխանությունների իրավասության տակ մտնում էին Խամսայի մելիքությունների տարածքները: Կառավարությանը մտահոգում էր հյուսիսային Արցախի բնակչության անվտանգության հարցը (Վ. Բ.):

1918 թ. օգոստոսի 2-ին կառավարությունը որոշում է նորաստեղծ պետությանը միացնել Գանձակի հայկական շրջանները³: Լեռնային Ղարաբաղի կառավարությունը ստիպված էր լուծել ոչ միայն ներքին կյանքին առնչվող բազմապիսի հարցեր, այլև անհրաժեշտ միջոցառումներ էին ձեռնարկվում երկրի պաշտպանութեամբ ամրապնդման և 3500 գաղթականների տեղավորման ուղղությամբ: Ելնելով ստեղծված իրավիճակից կառավարության կազմում կատարվում են կառուցվածքային փոփոխություններ: 1918 թ. հուլիսի վերջին որոշվեց ստեղծել գաղթականության գործերի վարչություն: Նորաստեղծ վարչության պետ նշանակվեց Մուշեղ Զաքարյանը, իսկ օգնական՝ Անուշավան Տեր-Սիբայեսանը⁴: Այնուհետև արտաքին գործերի նախարարությունը առանձնացվեց ներքին գործերից: Արտաքին գործերի վարիչ դարձավ Աշոտ Մելիք-Շովկունիանը, որը Միջկուսակցական Բյուրոյի ժամանակ

¹ Բժ. Ա. Բաբայան, Եօն Յայաստանի անկախութեամ պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 28-29:

² «Մշակ» 23 փետրվարի, № 42, 1919:

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 314, գ.1, գ. 34, թ. 60:

⁴ Եղիշե Իշխանյան, էջ 180:

նույնպես արտաքին գործերի վարիչն էր¹: Այդպիսով կառավարության կազմը համարվեց և ձեռնամուխ եղավ երկրի առջև ծառացած ներքին ու արտաքին հարցերի կարգավորմանը:

Աղրբեջանի մուսավաթական կառավարությունը և թուրքական իրամանատարությունը լավ հասկանալով, որ խարդավանքներով ու դիվանագիտական խաղերով չեն կարող տիրանալ Լեռնային Ղարաբաղին, փորձեցին հարցը լուծել գենքի ուժով: Այդ նպատակով ենվեր փաշայի հրամանով թուրքական մի զորագունդ է տեղափոխվում Գանձակ: Թուրքական մեկ այլ զորամաս 1918 թ. օգոստոսին անցավ Հագարու գետի կողմերը, նպատակ ունենալով Արցախը կտրել Սյունիքից, միաժամանակ թույլ չտալ, որ Շուշիի գումարը Գորիսից անցնի Լեռնային Ղարաբաղ: Նուրի փաշայի տրամադրության տակ դրվեց «Վայրի դիվիգիան», որը նույնպես նախապատրաստվում էր ներխուժել Արցախ:

Այս ամենը զուգակցվում էր տնտեսական ճնշումներով: Լեռնային Ղարաբաղի հայությանը արգելվեց տնտեսական կապեր պաշտպանել Ղաշտային Ղարաբաղի մահմեդական բնակչության հետ: Հայ գյուղացիներին արգելված էր վաճառել հաց, աղ և առաջին անհրաժեշտության ապրանքները, հատկապես պարենային:

Իրավիճակը Արցախում օրեցօր ավելի էր ծանրանում: 1918 թ. օգոստոսի 3-ին թուրքերը մտել են Բաքու և հաշվեհարդար տեսել հայության հետ, օգոստոսի 4-ին նույն ճակատագրին արժանացան Արցախը Զանգեզուրի հետ կապող կարևոր հանգուցակետերից՝ Բերդանարի ենթաշրջանի գյուղերը:

1918 թ. սեպտեմբերի 4-ին նույնավաթական կառավարության կողմից Ղարաբաղի պարետի պաշտոնին նշանակված Խսմայիլ Շակկի բնեկը գրավոր վերջնագիր է ուղարկում Ղարաբաղի ժողովրդական կառավարությանը՝ գենքը վայր դնելու և ճանաչելու Աղրբեջանի իշխանությունը²: 1918 թ. օգոստոսի 18-ին նուրի փաշան կոչով դիմում է Ղարաբաղի հայությանը՝ խղճալ իրենց երեխաներին և ընդունել Աղրբեջանի գերիշխանությունը³: Նույն պահանջով Ղարաբաղի ժողովրդական կառավարությանն է դիմում Աղդամում գտնվող Կովկասյան մուսուլ-

¹ Եղիշե Իշխանյան, էջ 180:

² Նույն տեղում, էջ 194:

³ «Մշակ», 18 փետրվարի, 1919:

մանական առաջին դիվիզիայի հրամանատար Զամիլ Զահիդ բեյը¹:

Այս օրախնդիր հարցը քննարկելու համար 1918 թ. սեպտեմբերի 7-10-ը Շուշիում հրավիրվեց արցախահայության երկրորդ համագումարը: Օրակարգի հարցերն էին. «ա) ճանաչել Աղրբեջանի իշխանությունը, բ) Ենթարկելով իշխանութեան, վար դմել ու յանձնել գենքերը, գ) զեկուցում կառավարութեան և անւանափոխութիւն»²: Համագումարը միաժամանակ մերժում է թուրքերի և Աղրբեջանի հանրապետության կառավարության անօրինական պահանջները: Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը հրաժարական տվեց: Համագումարը այն մերժեց և նորընտիր կառավարությունը թարմացվեց 5 հոգով: Միաժամանակ համագումարը որոշեց Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը վերանվանել Ղարաբաղի Հայոց ժողովրդական խորհուրդ: Համագումարը, որպես կառավարության անդամներ, ընտրում է հետևյալ անձանց.

1. Իշխանյան Եղիշե, նախագահ, դաշնակցական,
2. Եսայան Մելիքսեթ, քարտուղար, չեզոք,
3. Զաքարյան Մուշեղ, գաղթականության կոմիսար, դաշնակցական,
4. Թումյան Հարություն, գինվորական կոմիսար, դաշնակցական,
5. Մուսայելյան Հայրապետ, ազատ, դաշնակցական,
6. Շովիաննիսյան Արա, պարենավորման կոմիսար, էսեռ,
7. Շահնազարյան Ռուբեն, լուսավորության կոմիսար, դաշնակցական,
8. Վարդապետյան Լևոն, արդարադատության կոմիսար, մենշևիկ,
9. Տեր-Միքայելյան Անուշավան, խնամատարության կոմիսար, դաշնակցական,
10. Քանայան Արշավիր, ֆինանսների կոմիսար, մենշևիկ,
11. Շովսեփյան Աշոտ, արտաքին գործերի կոմիսար, դաշնակցական³:

Փաստորեն նորընտիր կառավարության մեջ ընտրվեցին Ղարա-

¹ «Մշակ», 23 փետրվարի, 1919:

² Եղիշե Իշխանյան, էջ 200:

³ Եղիշե Իշխանյան, էջ 203-204:

բաղի քաղաքական բոլոր ուժերի ներկայացուցիչները, որոնք նպատակ ունեին ի մի բերել երկրի ներուժը և համահավաք ձևով դիմակայել արտաքին քշնամիներին: Միայն բոլշևիկյան կուսակցության ներկայացուցիչները չընտրվեցին կառավարության կազմում: Բանը նրանում էր, որ վերջիններիս խորթ էին ազգային շահերն ու իհմնախնդիրները և համակված համաշխարհային հեղափոխության հայակործան մոլուցքով, նպատակ ունեին ներքին ու արտաքին հանգանաճները օգտագործել՝ երկիրը դարձնելու խորհրդային:

Արցախյան շարժման առաջին իսկ օրվանից սկսած, ցավոք սրտի, հայկական դիվանագիտությունը մշտապես ծգտել և ծգտում է դարաբայան հակամարտությունը լուծել ազգերի ինքնորոշման միջազգային իրավունքի սկզբունքի հիման վրա, դրանով իսկ ժխտելով դարեր ի վեր արցախահայ պետականության գոյության փաստը:

Ազգերի ինքնորոշման իրավունքի շարահարումը կասկածանքի տակ է դնում արցախահայության տարածքային ամբողջականության սկզբունքը, որի մասին փաստերով խոսվեց վերևում: Գաղտնիք չէ, որ միջազգային խաղի կանոնները որոշել և շարունակում են որոշել մեծ տերությունները, այն պետությունները, որոնք հարյուրամյակներ շարունակ մայր երկրները ծաղկեցրել են ի հաշիվ գաղութների, որոնց եթե ոչ քաղաքական, ապա տնտեսական շահագործումը ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության կեղծ պատրվակով քողածածկած շարունակում և նոր որակներ են հաղորդում: Ակնհայտ է, որ այս պարագայում տարածքային ամբողջականության սկզբունքը գերակա է դառնում ազգերի ինքնորոշման միջազգային նորմից:

Բարեբախտաբար պատճական անցյալը և արցախյան շարժման ողջ ընթացքը մեզ հնարավորություն են տալիս դարաբայան քննութք լուծել երկու սկզբունքների համադրմամբ: Եթե կուգեք տարածքային ամբողջականության սկզբունքը, որ այդքան շատ սիրում են շահարկել Ադրբեջանի քաղաքական և ոչ քաղաքական շրջանակները, օգտագործելով ամեն մի միջոցառում, անգամ սպորտային և որն էլ բարեհաջող կերպով մարսվում և միս ու արյուն է ստանում միջազգային դիվանագիտության խոհանոցում, այսօր առավել շատ շահեկան է հայկական կողմի համար: Պատճառաբանությունը շատ ակնհայտ է: դեռևս մինչև Ադրբեջանի 1918 թ. մայիսի 27-ի հանրապետության ասպարեզ գալը, արցախահայության ստեղծած պետական ինստիտուտները տնօրինում

Իմ Գանձակի մատուցներից մինչև Արաքսի ափերը ընկած, ինչպես հայ, այնպես էլ այլ ազգային փոքրամասնությունների, այդ թվում թաթարների (աղբբեջանցինների) բնակավայրերի տնտեսական, մշակութային ու քաղաքական կյանքը:

Ինչ վերաբերում է ազգերի ինքնորոշման իրավունքին, ապա այստեղ հայ դիվանագիտության անելիքները նույնպես շատ են: Բանը նրանում է, որ ազգերի ինքնորոշման միջազգային այս նորմը հանրությանը երբեմն մատուցվում է որպես Աղբբեջանի «քարի կամեցողությունից» կախված հանգամանք, կասկածանքի տակ դնելով արցախահայության իրավունքը: Դայտնի է, որ ազգերի ինքնորոշման իրավունքից հավասարապես օգտվել են ինչպես Աղբբեջանի հանրապետության, այնպես էլ ԼՂՀ ազգաբնակչությունը:

ԽՍՀՄ փլուզումից առաջ խորհրդային Աղբբեջանը բաղկացած էր իրավահավասար երեք սուբյեկտներից՝ Նախիջևանի Ինքնավար հանրապետությունից, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզից և բուն Աղբբեջանից:

ԼՂԻՄ ազգաբնակչությունը, օգտվելով ԽՍՀՄ սահմանադրության ընձեռած հնարավորությունից, 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց իր անկախությունը: Դա թշնամաբար ընդունվեց նախկին խորհրդային Աղբբեջանի սուբյեկտներից մեկի՝ բուն Աղբբեջանի կողմից և փորձ արվեց զինական ուժով հարևան երկրի տարածքների բռնագրավման ճանապարհով, ԼՂՀ արորիգեն բնակչության՝ հայության եղեռնի միջոցով հասնել իր հավակնոտ նպատակներին: Արցախահայության ազատագրական հայրենական պատերազմը, որը տևեց 1991-94 թթ., ավարտվեց թշնամու պարտությամբ: Ահա պատմական այս պարզ ճշմարտությունը և չենք կարողանում պատշաճին կերպով մատուցել աշխարհին:

Ընդհանրացնելով վերոհիշյալ փաստերն ու մեկնաբանությունները, կարելի է ասել, որ միջազգային իրավունքի բոլոր սկզբունքները գործում են մեր օգտին, պարզապես հայկական երկու հանրապետությունների իրավասու մարմինները և քաղաքական ուժերը անզիջում դիրքորոշմամբ և աշխատանքով պետք է պաշտպանեն մեր ազգային շահերը: